Հավելված 6[1]
«ԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/11»* ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/11

ք. Մարալիկ «24» հուլիսի 2018 թ.

ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքապետարանը, ի դեմս Ա. Գևորգյանի, որը գործում է <<ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Անիի ՃՇՏ>>ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Կ.Առաքելյանի -ի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Անիպեմզա, Անիավան և Ջրափի բնակավայրերի փողոցների փոսային և խճային հիմքով նորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 31.10.2018թ.:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

---

[1] Սույն հավելվածը հրավերից հանվում է, եթե գնման առարկա չեն հանդիսանում շինարարական աշխատանքները:

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

**3.2.3** Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների առնվազն ----- տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար

Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 15687420 (տասնհինգ միլիոն վեց հարյուր ութանասունյոթ հազար չորս հարյուր քսան) ՀՀ դրամ, որից 2614570 (երկու միլիոն վեց հարյուր տասչորս հազար հինգ հարյուր յոթանասուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

1-ին չափաբաժին 4940110 (չորս միլիոն ինն հարյուր քառասուն հազար հարյուր տաս) ՀՀ դրամ՝ որից 823352 (ութ հարյուր քսաներեք հազար երեք հարյուր հիսուներկու) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

-------------------------------------------------------------------------------------------------------------------

2-րդ չափաբաժին 4886630 (չորս միլիոն ութ հարյուր ութսանասունվեց հազար վեց հարյուր երեսուն) ՀՀ դրամ՝ որից 814438 (ութ հարյուր տասչորս հազար չորս հարյուր երեսունութ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն[2]

-------------------------------------------------------------------------------------------------------------------

3-րդ չափաբաժին 5860680 (հինգ միլիոն ութ հարյուր վաթսուն հազար վեց հարյուր ութանասուն ) ՀՀ դրամ՝ որից 976780 (ինն հարյուր յոթանասունվեց հազար յոթ հարյուր ութնասուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն[3]:

5.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև ----------- (-------------------------) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ[4]:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[5].

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

---

[2] *Եթե Կապալառուի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս սույն կետից հանվում են «որից -------- (----------) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն» բառերը:*

[3] *Եթե Կապալառուի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս սույն կետից հանվում են «որից -------- (----------) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն» բառերը:*

[4] *Կապալառուն կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:*

[5] *Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ,ապա ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի*

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[6]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

---

[6] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում[7]:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[8]:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է __7__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը

---

[7] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով:*

ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[9]

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

Անի համայնքապետարան,
ք. Մարալիկ, Մաղաթյան 1
<<Կենտրոնական գանձապետարան>>
ՀՎՀՀ 05546057
Հ/Հ 900492171096
Համայնքապետ՝ Ա. Գևորգյան

-----------------------------------
/ստորագրություն/

Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

<<Անիի ՃՇՇ>> ՍՊԸ
ք. Մարալիկ, Հ. Շահինյան
<<Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ>>ՓԲԸ
Մարալիկ մ/ճ
ՀՎՀՀ 06000133
Հ/Հ 220363332051000
Տնօրեն՝ Կ. Առաքելյան

-----------------------------------
/ստորագրություն/

Կ.Տ

*Հավելված թիվ 1*

« *24* » *հուլիսի 2018թ. կնքված*

ԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/11 *ծածկագրով պայմանագրի*

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ[1]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ` ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԻՊԵՄԶԱ, ԱՆԻԱՎԱՆ ԵՎ ՋՐԱՓԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՓՈՍԱՅԻՆ ԵՎ ԽՃԱՅԻՆ ՀԻՄՔՈՎ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

---

*լաթերթ-նախահաշիվը հրապարակվում է ներառյալ ըստ աշխատանքների կատարման արժեքների:*

Շիրակի մարզի Անի համայնքի Անի Պեմզա բնակավայրի փողոցի փոսային նորոգում

Նախահաշիվ 1-1

| ...երի և ծախսերի շիֆրը | Աշխատանքների և ծախսերի անվանումը | Չ/մ | Քանակ | Միավորի արժեքը 1984թ գներով | | Միավոր աշխ.ատար. մ/ժամ | Ընդամենը հազ.դրամ | | Ընդամենը աշխ.ատար. մ/ժամ | Նյութեր | | | | | Ընդամենը ուղղակի ծախսեր հազ.դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Աշխ. վարձ | Մեք. շահագ. | | Աշխ. վարձ | Մեք. շահագ. | | Անվանումը | Չ/մ | Քանակ | Մ/արժ. հազ.դր | Ընդամենը հազ.դրամ | |
| 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 |
| 3–29 | Ա/ք ծածկի քանդուքի՝ շին.աղբի բարձում ավտոինքնաթափի վրա ձեռքով | տ | 32,81 | 0,36 | 0 | 0,612 | 23,39 | 0,00 | 20,08 | | | | | 0,00 | 23,39 |
| 0-7 | Շին.աղբի տեղափոխում մինչև 7 կմ | տ | 32,81 | 0 | 0,69 | 0 | 0,00 | 62,82 | 0,00 | | | | | 0,00 | 62,82 |
| 604 | Աշխատանք հողակույթի վրա | խոր.մ | 18,3 | 0 | 0,012 | 0,0032 | 0,06 | 0,63 | 0,06 | | | | | 0,00 | 0,6841 |
| -5Վ | Մինչև 25ք.մ մակերեսով փոսորակային վերանորոգում | քառ.մ | 367 | 0,25 | 0,054 | 0,42 | 178,02 | 55,29 | 152,86 | Ա/բետոնից խառնուրդ | տ | 0,119 | 24,00 | 1221,36 | 1454,66 |
| | | | | | | | | | | Բիտում | տ | 0,0007 | 174,00 | 52,09 | 52,09 |
| | Ընդամենը | | | | | | 201,46 | 118,73 | 173,00 | | | | | 1273,44 | 1593,64 |

| | |
|---|---|
| Վերադիր ծախսեր 13,3% | 211,95 |
| Ընդամենը | 1805,59 |
| Շահույթ 11% | 198.62 |

| | | |
|---|---|---|
| Ընդամենը | | 2004,21 |

| | | |
|---|---|---|
| Ժամանակավոր շենքեր և կառույցներ 0,5% | | 10,02 |
| Ընդամենը | | 2014,23 |
| Չնախատեսված ծախսեր 0,6% | | 12,09 |
| Ընդամենը | | 2026,32 |
| ԱԱՀ 20% | | 405,26 |
| Ընդամենը | | 2431,58 |

Շիրակի մարզի Անի համայնքի Անի Պեմզա բնակավայրի փողոցի փոսային նորոգում խճային հիմքով

Նախահաշիվ 1-2

| ...ների և ծախսերի շիֆրը | Աշխատանքների և ծախսերի անվանումը | Չ/մ | Քանակ | Միավորի արժեքը 1984թ գներով | | Միավոր աշխ.ուտ. մ/ժամ | Ընդամենը հազ.դրամ | | Ընդամենը աշխ.ուտ. մ/ժամ | Նյութեր | | | | | Ընդամենը ուղղակի ծախսեր հազ.դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Աշխ. վարձ | Մեք. շահագ. | | Աշխ. վարձ | Մեք. շահագ. | | Անվանումը | Չ/մ | Քանակ | Մ/արժ. հազ.դր | Ընդամենը հազ.դրամ | |
| 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 |
| 3--29 | Ա/բ ծածկի քանդուցքի՝շին.աղբ ի բարձում ավտոինքնաթափի վրա ձեռքով | տ | 33,21 | 0,36 | 0 | 0,612 | 23,67 | 0,00 | 20,32 | | | | | 0,00 | 23,67 |
| 0-7 | Շին.աղբի տեղափոխում մինչև | տ | 19,8 | 0 | 0,69 | 0 | 0,00 | 37,90 | 0,00 | | | | | 0,00 | 37,90 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 7 կմ | | | | | | | | | | | | | | |
| 04 | Աշխատանք հողակույթի վրա | խոր.մ | 18,45 | 0 | 0,012 | 0,0032 | 0,06 | 0,63 | 0,06 | | | | | 0,00 | 0,6897 |
| 51 | Խճային հիմքի իրականացում | խոր.մ | 18,45 | 0,26 | 0,22 | 0,442 | 9,50 | 11,26 | 8,15 | Խիճ | խ.մ | 1,26 | 4 | 108,35 | 129,11 |
| 5Վ | Մինչև 25ք.մ մակերեսով փոսորակային վերանորոգում | քառ.մ | 369 | 0,25 | 0,054 | 0,42 | 178,99 | 55,59 | 153,69 | Ա/բետոնից խառնուրդ | տ | 0,119 | 24,00 | 1228,01 | 1462,59 |
| | | | | | | | | | | Բիտում | տ | 0,0007 | 174,00 | 52,37 | 52,37 |
| | Ընդամենը | | | | | | 212,21 | 105,39 | 182,23 | | | | | 1388,74 | 1706,34 |

| | | |
|---|---|---|
| **երադիր ծախսեր 13,3%** | | **226,94** |
| **Ընդամենը** | | **1933,28** |
| **Շահույթ 11%** | | **212,66** |
| **Ընդամենը** | | **2145,94** |

| | | |
|---|---|---|
| **ամանակավոր շենքեր և կառույցներ 0,5%** | | **10,73** |
| **Ընդամենը** | | **2156,67** |
| **նախատեսված ծախսեր 0,6%** | | **12,94** |
| **Ընդամենը** | | **2169,61** |
| **ԱԱՀ 20%** | | **433,92** |
| **Ընդամենը** | | **2603,53** |

**Շիրակի մարզի Անի համայնքի Անի Ավան բնակավայրի փողոցի փոսային նորոգում**

Նախահաշիվ 1-1

| | Աշխատանքների և ծախսերի անվանումը | Չ/մ | Քանակ | Միավորի արժեքը 1984թ գներով | | Միավոր աշխ.ռտար. մ/ժամ | Ընդամենը հազ.դրամ | | Ընդամենը աշխ.ռտար. մ/ժամ | Նյութեր | | | | | Ընդամենը ուղղակի ծախսեր հազ.դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Աշխ. վարձ | Մեք. շահագ. | | Աշխ. վարձ | Մեք. շահագ. | | Անվանումը | Չ/մ | Քանակ | Մ/արժ. հազ.դր | Ընդամենը հազ.դրամ | |
| | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 |
| 9 | Ա/բ ծածկի քանդուցքի՝շին.աղբի բարձում ավտոինքնաթափի վրա ձեռքով | տ | 21,65 | 0,36 | 0 | 0,612 | 15,43 | 0,00 | 13,25 | | | | | 0,00 | 15,43 |
| -7 | Շին.աղբի տեղափոխում մինչև 7 կմ | տ | 21,65 | 0 | 0,69 | 0 | 0,00 | 41,45 | 0,00 | | | | | 0,00 | 41,45 |
| 04 | Աշխատանք հողակույթի վրա | խոր.մ | 12,03 | 0,002 | 0,0123 | 0,0032 | 0,04 | 0,41 | 0,04 | | | | | 0,00 | 0,4497 |
| 5Կ | Մինչև 25ք.մ մակերեսով փոսորակային վերանորոգում | քառ.մ | 240,6 | 0,25 | 0,054 | 0,42 | 116,72 | 36,25 | 100,22 | Ա/բետոնից խառնուրդ | տ | 0,119 | 24,00 | 800,80 | 953,78 |
| | | | | | | | | | | Բիտում | տ | 0,0007 | 174,00 | 34,15 | 34,15 |
| | Ընդամենը | | | | | | 132,19 | 78,11 | 113,51 | | | | | 834,96 | 1045,25 |

| | |
|---|---|
| ...րադիր ծախսեր 13,3% | **139,02** |
| **Ընդամենը** | **1184,27** |
| **Շահույթ 11%** | **130,27** |

| | |
|---|---|
| Ընդամենը | 1314,54 |
| ...ամանակավոր շենքեր և կառույցներ 0,5% | 6,57 |
| Ընդամենը | 1321,12 |
| ...նախատեսված ծախսեր 0,6% | 7,93 |
| Ընդամենը | 1329,04 |
| ԱԱՀ 20% | 265,81 |
| Ընդամենը | 1594,85 |

Շիրակի մարզի Անի համայնքի Անի Ավան բնակավայրի փողոցի փոսային նորոգում խճային հիմքով

Նախահաշիվ 1-2

| | Աշխատանքների և ծախսերի անվանումը | Չ/մ | Քանակ | Միավորի արժեքը 1984թ գներով | | Միավորի աշխ.ծախս. մ/ժամ | Ընդամենը հազ.դրամ | | Ընդամենը աշխ.ծախս. մ/ժամ | Նյութեր | | | | | Ընդամենը ուղղակի ծախսեր հազ.դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Աշխ. վարձ | Մեք. շահագ. | | Աշխ. վարձ | Մեք. շահագ. | | Անվանումը | Չ/մ | Քանակ | Մ/արժ. հազ.դր | Ընդամենը հազ.դրամ | |
| | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 |
| ...9 | Ա/բ ծածկի քանդուցքի՝ շին.աղբ ի բարձում ավտոինքնաթափի վրա ձեռքով | տ | 42,73 | 0,36 | 0 | 0,612 | 30,46 | 0,00 | 26,15 | | | | | 0,00 | 30,46 |
| ...-7 | Շին.աղբի տեղափոխում մինչև 7 կմ | տ | 42,73 | 0 | 0,69 | 0 | 0,00 | 81,80 | 0,00 | | | | | 0,00 | 81,80 |
| ...04 | Աշխատանք | խոր.մ | 23,75 | 0,002 | 0,0123 | 0,0032 | 0,07 | 0,81 | 0,08 | | | | | 0,00 | 0,8879 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | հողակույթի վրա | | | | | | | | | | | | | | |
| 51 | Խճային հիմքի իրականացում | խոր.մ | 23,75 | 0,26 | 0,22 | 0,442 | 12,23 | 14,50 | 10,50 | Խիճ | խ.մ | 1,26 | 4 | 139,48 | 166,20 |
| 5Վ | Մինչև 25ք.մ մակերեսով փոսրակային վերանորոգում | քառ.մ | 475 | 0,25 | 0,054 | 0,42 | 230,40 | 71,56 | 197,84 | Ա/բետոնից խառնուրդ | տ | 0,119 | 24,00 | 1580,78 | 1882,74 |
| | | | | | | | | | | Բիտում | տ | 0,0007 | 174,00 | 67,42 | 67,42 |
| | Ընդամենը | | | | | | 273,16 | 168,67 | 234,56 | | | | | 1787,67 | 2229,50 |

| | | |
|---|---|---|
| երադիր ծախսեր 13,3% | | 296,52 |
| **Ընդամենը** | | **2526,02** |
| **Շահույթ 11%** | | **277,86** |
| **Ընդամենը** | | **2803,89** |

| | | |
|---|---|---|
| ամանակավոր շենքեր և կառույցներ 0,5% | | 14,02 |
| **Ընդամենը** | | **2817,91** |
| խատեսված ծախսեր 0,6% | | 16,91 |
| **Ընդամենը** | | **2834,81** |
| **ԱԱՀ 20%** | | **566,96** |
| **Ընդամենը** | | **3401,78** |

**Շիրակի մարզի Անի համայնքի Ջրափի բնակավայրի փողոցի փոսային նորոգում**

Նախահաշիվ 1-1

| [illegible] | Աշխատանքների և ծախսերի անվանումը | Չ/մ | Քանակ | Միավորի արժեքը 1984թ գներով | | Միավոր աշխ.ստր. մ/ժամ | Ընդամենը հազ.դրամ | | Ընդամենը աշխ.ստր. մ/ժամ | Նյութեր | | | | | Ընդամենը ուղղակի ծախսեր հազ.դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Աշխ. վարձ | Մեք. շահագ. | | Աշխ. վարձ | Մեք. շահագ. | | Անվանումը | Չ/մ | Քանակ | Մ/արժ. հազ.դր | Ընդամենը հազ.դրամ | |
| 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 |
| 3-- 29 | Մ/բ ծածկի քանդուցքի՝ շին.աղբի բարձում ավտոինքնաթափի վրա ձեռքով | տ | 34,29 | 0,36 | 0 | 0,612 | 24,44 | 0,00 | 20,99 | | | | | 0,00 | 24,44 |
| 0-7 | Շին.աղբի տեղափոխում մինչև 7 կմ | տ | 34,29 | 0 | 0,69 | 0 | 0,00 | 65,64 | 0,00 | | | | | 0,00 | 65,64 |
| 604 | Աշխատանք հողակույթի վրա | խոր.մ | 18,95 | 0,002 | 0,012 | 0,0032 | 0,06 | 0,65 | 0,06 | | | | | 0,00 | 0,7084 |
| -5Վ | Մինչև 25ք.մ մակերեսով փոսորակային վերանորոգում | քառ. մ | 379 | 0,25 | 0,054 | 0,42 | 183,84 | 57,10 | 157,85 | Ա/բետոնից խառնուրդ | տ | 0,119 | 24,00 | 1261,29 | 1502,23 |
| | | | | | | | | | | Բիտում | տ | 0,0007 | 174,00 | 53,79 | 53,79 |
| | Ըիդամենը | | | | | | 208,34 | 123,39 | 178,90 | | | | | 1315,08 | 1646,81 |

| | | |
|---|---|---|
| **Վերադիր ծախսեր 13,3%** | | **219,03** |
| **Ընդամենը** | | **1865,83** |

| | |
|---|---|
| Շահույթ 11% | 205,24 |
| Ընդամենը | 2071,08 |
| | |
| ...ժամանակավոր շենքեր և կառույցներ 0,5% | 10,36 |
| Ընդամենը | 2081,43 |
| ...նախատեսված ծախսեր 0,6% | 12,49 |
| Ընդամենը | 2093,92 |
| ԱԱՀ 20% | 418,78 |
| Ընդամենը | 2512,70 |

Նախահաշիվ 1-2

| | Աշխատանքների և ծախսերի անվանումը | Չ/մ | Քանակ | Միավորի արժեքը 1984թ գներով | | Միավոր աշխ.տար. մ/ժամ | Ընդամենը հազ.դրամ | | Ընդամենը աշխ.տար. մ/ժամ | Նյութեր | | | | | Ընդամենը ուղղակի ծախսեր հազ.դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Աշխ. վարձ | Մեք. շահագ. | | Աշխ. վարձ | Մեք. շահագ. | | Անվանումը | Չ/մ | Քանակ | Մ/արժ. հազ.դր | Ընդամենը հազ.դրամ | |
| 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 |
| -229 | Ա/բ ծածկի քանդուցքի՝ շին.աղբ ի բարձում ավտոինքնաթափի վրա ձեռքով | տ | 43,88 | 0,36 | 0 | 0,612 | 31,27 | 0,00 | 26,85 | | | | | 0,00 | 31,27 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| -7 | Շին.աղբի տեղափոխում մինչև 7 կմ | տ | 43,88 | 0 | 0,69 | 0 | 0,00 | 83,99 | 0,00 | | | | | 0,00 | 83,99 |
| 04 | Աշխատանք հողակույթի վրա | խոր.մ | 24,35 | 0,002 | 0,012 | 0,0032 | 0,08 | 0,83 | 0,08 | | | | | 0,00 | 0,9103 |
| 51 | Խճային հիմքի իրականացում | խոր.մ | 24,35 | 0,26 | 0,22 | 0,442 | 12,53 | 14,86 | 10,76 | Խիճ | խ.մ | 1,26 | 4 | 143,00 | 170,40 |
| 5Կ | Մինչև 25ք.մ մակերեսով փոսորակային վերանորոգում | քառ.մ | 487 | 0,25 | 0,054 | 0,42 | 236,22 | 73,37 | 202,84 | Ա/բետոնից խառնուրդ | տ | 0,119 | 24,00 | 1620,71 | 1930,30 |
| | | | | | | | | | | Բիտում | տ | 0,0007 | 174,00 | 69;12 | 69,12 |
| | Ըհդամենը | | | | | | 280,11 | 173,06 | 240,53 | | | | | 1832,83 | 2286,00 |

| | | |
|---|---|---|
| **...երադիր ծախսեր 13,3%** | | **304,04** |
| **Ընդամենը** | | **2590,03** |
| **Շահույթ 11%** | | **284,90** |
| **Ընդամենը** | | **2874,94** |

| | | |
|---|---|---|
| **...ամանակավոր շենքեր և կառույցներ 0,5%** | | **14,37** |
| **Ընդամենը** | | **2889,31** |
| **...խատեսված ծախսեր 0,6%** | | **17,34** |
| **Ընդամենը** | | **2906,65** |
| **ԱԱՀ 20%** | | **581,33** |
| **Ընդամենը** | | **3487,98** |

* Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Անիպեմզա, Անիավան և Ջրափի բնակավայրերում:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
| --- | --- |
| Անի համայնքապետարան, | <<Անիի ՃՇՇ>> ՍՊԸ |
| ք. Մարալիկ, Մաղաթյան 1 | ք. Մարալիկ, Հ. Շահինյան |
| <<Կենտրոնական գանձապետարան>> | <<Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ>>ՓԲԸ |
| ՀՎՀՀ 05546057 | Մարալիկ մ/ճ |
| Հ/Հ 900492171096 | ՀՎՀՀ 06000133 |
| Համայնքապետ՝ Ա. Գևորգյան | Հ/Հ 220363332051000 |
| | Տնօրեն՝ Կ. Առաքելյան |
| ------------------------------ /ստորագրություն/ | ------------------------------ /ստորագրություն/ |
| | Կ.Տ |

*Հավելված թիվ 2*
*« 24 » հուլիսի 2018թ. կնքված*
*ԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/11 ծածկագրով պայմանագրի*

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԻՊԵՄԶԱ, ԱՆԻԱՎԱՆ ԵՎ ՋՐԱՓԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՓՈՍԱՅԻՆ ԵՎ ԽՃԱՅԻՆ ՀԻՄՔՈՎ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը** | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Անիպեմզա բնակավայրի փոսային նորոգում, փոսային նորոգում խճային հիմքով | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը | 31.10.2018թ. |
| 2 | ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Անիավան բնակավայրի փոսային նորոգում, փոսային նորոգում խճային հիմքով | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը | 31.10.2018թ. |
| 3 | ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Ջրափի բնակավայրի փոսային նորոգում, փոսային նորոգում խճային հիմքով | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը | 31.10.2018թ. |
| 4 | | | |
| 5 | | | |
| ... | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

Անի համայնքապետարան,
ք. Մարալիկ, Մաղաթյան 1
<<Կենտրոնական գանձապետարան>>
ՀՎՀՀ 05546057
Հ/Հ 900492171096
Համայնքապետ՝ Ա. Գևորգյան

------------------------------
/ստորագրություն/

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

<<Անիի ՃՇՇ>> ՍՊԸ
ք. Մարալիկ, Հ. Շահինյան
<<Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ>>ՓԲԸ
Մարալիկ մ/ճ
ՀՎՀՀ 06000133
Հ/Հ 220363332051000
Տնօրեն՝ Կ. Առաքելյան

------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 3*
*«24» հուլ 2018թ. կնքված*
**ԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/11** *ծածկագրով պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45231177 | Անիպեմզա բնակավայրի փոսային նորոգում, փոսային նորոգում խճային հիմքով | | | | | | | 4940110 | 4940110 | 4940110 | 4940110 | 4940110 | 4940110 | 4940110 |
| 2 | 45231177 | Անիավան բնակավայրի փոսային նորոգում, փոսային նորոգում խճային հիմքով | | | | | | | 4886630 | 4886630 | 4886630 | 4886630 | 4886630 | 4886630 | 4886630 |
| 3 | 45231177 | Ջրափի բնակավայրի փոսային նորոգում, փոսային նորոգում խճային հիմքով | | | | | | | 5860680 | 5860680 | 5860680 | 5860680 | 5860680 | 5860680 | 5860680 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Անի համայնքապետարան,
ք. Մարալիկ, Մաղաթյան 1
<<Կենտրոնական գանձապետարան>>
ՀՎՀՀ 05546057
Հ/Հ 900492171096
Համայնքապետ Ա. Գևորգյան

------------------------------
/ստորագրություն/

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

<<Անիի ՃՇՇ>> ՍՊԸ
ք. Մարալիկ, Հ. Շահինյան
<<Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ>>ՓԲԸ
Մարալիկ մ/ճ
ՀՎՀՀ 06000133
Հ/Հ 220363332051000
Տնօրեն՝ Կ. Առաքելյան

------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված 9*
*« ԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/11 »* ծածկագրով*
*գնանշման հարցման հրավերի*

# ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
## (պայմանագրի կատարման ապահովում)

ք. Մարալիկ «_____» հուլիս 2018 թ.**

<<Անիի ՃՇՇ>> ՍՊԸ ի դեմս Ընկերության տնօրեն Կ.Առաքելյանի անձ. AM 0351780 022-ի կողմից տրված 27.06.2011թ-ին
Ընկերության անվանումը Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

### 1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Անի համայնքապետարան * (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից
պատվիրատուի անվանումը

կազմակերպված՝ ԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/11 * ծածկագրով գնման ընթացակարգին:
ընթացակարգի ծածկագիրը

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի /այսուհետ՝ Պահանջագիր/ ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև /__/____/20__ ** (Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան, իսկ պայմանագրով երաշխիքային ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ երաշխիքային ժամկետի ավարտին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ):

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

### 3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները`

<<Անիի ՃՇՇ>> ՍՊԸ

ընկերության անվանումը

ք. Մարալիկ, Հ. Շահինյան

ընկերության հասցեն

<<Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ>>ՓԲԸ Մարալիկ մ/ճ

ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

Հ/Հ 220363332051000

ընկերության բանկային հաշվեհամարը

ՀՎՀՀ 06000133

ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

Տնօրեն` Կ. Առաքելյան

ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

Օր/ամիս/տարի

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից` մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

*** լրացվում է մասնակցի կողմից*

1. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[10]

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝<<ԱՆԻԻ ՃՇՇ>>ՍՊԸ

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն ( բանկ)՝ <<Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ>>ՓԲԸ Մարալիկ մ/ճ

6. Վճարողի հաշվի համարը՝ 220363332051000

7. Վճարողի ՀՎՀՀ՝ 06000133

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ **Անի համայնքապետարան**

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ **05546057**

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **Կենտրոնական գանձապետարան**

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) **900495101090**

14.Գումարը (թվերով և բառերով)՝ 1568740 (մեկ միլիոն հինգ հարյուր վաթսունութ հազար յոթ հարյուր քառասուն)ՀՀ դրամ

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ **ԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/11**

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

| 22.ա. Շահառուի ստորագրությունները | 21.ա. Վճարողի ստորագրությունները՝ |
|---|---|
| /____________________/ | /____________________/ |
| /____________________/ | /____________________/ |
| 22.բ. Կ.Տ. | 21.բ. Կ.Տ |
| 24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն | 23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն |
| /____________________/ /ստորագրություն/ | /____________________/ /ստորագրություն/ |
| 24.բ. Կ.Տ. | 23.բ. Կ.Տ. |
| 24.գ ____________________ "___" ___ 20___ թ. | 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |